

## Լուսինե ՍԱՀԱԿՅԱՆ

### ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ՀԱՄԱՏԵՂ ԶՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հետազոտելով պատանիների հաղորդակցման հիմնահարցը գեղարվեստական նյութի վրա համատեղ խմբային գործունեության մեջ՝ ելնում ենք այն բանից, որ գեղարվեստական գրականությունը յուրովի է զարգացնում նրանց մտածողությունը:

Ուսուցման նախկին խորհրդային տեսությունները զխավոր ուշադրությունը դարձրել են «ուսուցիչ-աշակերտ» հարաբերության վրա և դպրոցականների մտածողության զարգացման հիմնահարցերը քննարկել են գերազանցապես նշված հարաբերության շրջանակներում: Մտածողության զարգացման գործում կարևորվել է հասկացությունը ուսուցման գործընթաց պատրաստի ներմուծելու եղանակը: Հաղորդակցումը դպրոցականների հետ ուսուցչի կողմից իրականացվում էր առանց հետադարձ կապի: Այդ գործունեության արդյունքում մեծ թվով սովորողներ դուրս էին մնում ուսուցչի հսկողությունից: Դասի ժամանակ «ուսուցիչ -աշակերտ» հաղորդակցման գործընթացում սովորողը փոխներգործության մեջ էր մտնում միայն ուսուցչի հետ, տեղեկություն էր քաղում ոչ միայն նրա խոսքի միջոցով, այլև նրա տարբեր շարժումներից: Տեղեկատվության այս տարբեր աղբյուրները, լրացնելով միմյանց, հնարավորություն են տվել աշակերտներին՝ իրարից զանազանել զխավորը և երկրորդականը և ըստ այդմ նախագծել առաջադրանքի կատարումը: Անմիջական հաղորդակցման միջոցով տեղեկությունը ոչ միայն հաղորդվում և ընդունվում է, այլև վերամշակվում: Այս ճանապարհով են ձևավորվում ուսուցման գործընթաց ներմուծվող հասկացությունները:

Անմիջական հաղորդակցումը ակտիվ միջանձնային փոխներգործության գործընթաց է, որի մեջ զարգանում է մարդու մտածողությունը: Հաղորդակցվողների մտածողությունը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ կապված հաղորդակցման խընդիրների հետ: Հաղորդակցման մեջ դրսևորվում են մարդկանց գործունեության մղող դրդապատճառները, նպատակները, հետաքրքրությունները, ձգտումները, հուզականային հատկությունները, մտածողության ոճը, բնավորության գծերը և այլն: Չի կարելի լիարժեքորեն ուսումնասիրել մարդու հոգեկանի զարգացումը, մտածողության և հիշողության երևան գալը՝ անտեսելով հաղորդակցման մեջ օգտագործվող միջոցները:

Մարդկանց անմիջական հաղորդակցական գործունեության հիմքի վրա է ձևավորվել միջնորդավորված հաղորդակցումը: Միջնորդավորված հաղորդակցման երևան գալու գործընթացի մեջ կարևորվում են գրավոր խոսքի դերն ու նշանային այն համակարգերը, որոնք մարդիկ օգտագործում են իրենց գործունեության մեջ: Միջնորդավորված հաղորդակցման մեջ կարևոր նշանակություն ունի ներքին երկխոսությունը: Հաղորդակցվող անձինք, նախապես ծանոթ լինելով նյութերին, մտնում են երկխոսության մեջ՝ դրանով միջնորդավորված հաղորդակցմանը օժտելով անմիջական հաղորդակցման գործընթացի հատկանիշներ: Միջնորդավորված հաղորդակցման երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ մասնակիցներին ծանոթ է խոսակցության նյութը, որը նրանց է տրվում գրավոր ձևով (դասագրքեր, գրական ստեղծագործություններ և այլն): Հաղորդակցման ընթացքում չի կարելի անտեսել նաև «աշակերտ-աշակերտ», «աշակերտ-մեծահասակ», «աշակերտ-օբյեկտ» և այլ կարգի հարաբերությունների դերը: «Աշակերտ-աշակերտ» հարաբերության ժամանակ մի դպրոցական խոսքային հարաբերության մեջ է մտնում մեկ ուրիշ դպրոցականի հետ և հաղորդակցման շնորհիվ տեղեկություններ է ստանում նրանից: Ճիշտ նույն ձևով դպրոցականը տեղեկություն կարող է ստանալ մեծահասակից: Դպրոցից դուրս աշակերտը ինքնուրույն աշխատում է գրքերի հետ: Բոլոր տեսակի ընթերցումների հիմքում ընկած է հաղորդակցումը: Միջնորդավորված հաղորդակցման ժամանակ, ունենալով կոնկրետ պատկերացում թեմայի վերաբերյալ, պատանին մտածում է հաղորդվող նյութի մասին, ծնվում են նաև նոր մտքեր, որոնք կարիք ունեն յուրացման: Թե նշված գործընթացը ինչպես է ընթանում դպրոցականների մոտ, առայսօր ուսումնասիրված չէ: Գիտավորձը ցույց տվեց, որ այդպիսի երկխոսության ժամանակ գրավոր միջնորդավորված հաղորդակցում իրականացնողների մոտ երևան են գալիս նոր մտքեր, դատողություններ,

որոնք կարող են դառնալ դպրոցականների սեփականություն, եթե միջնորդավորված հաղորդակցման մյուսը քննարկվում է համատեղ խմբային գործունեության մեջ:

Սովորողների մտածողության առանձնահատկությունները ուսումնասիրելու նըպատակով նրանց ընդգրկել ենք 2-3 հոգուց բաղկացած ռեֆերենտային փոքր խմբերի մեջ և հանձնարարել Ալ. Շիրվանզադեի «Արտիստը» վիպակի քննարկումը: Հետևելով քննարկման ընթացքին՝ հնարավորություն ենք ունենում ոչ միայն պարզել պատանհիների խմբային մտածողության առանձնահատկությունները, այլև անհատական մտածողության դերը խմբային մտածողության մեջ: Ընդհանուր առաջադրանք կատարելու ժամանակ մասնակիցներից պահանջվում էր դրսևորել հաղորդակցման արվեստ: Առաջադրանքի համատեղ կատարումը խմբի անդամներից պահանջում է մտածողության վերակառուցումներ, խոսքային հարաբերակցում, մյուսների մտածողության համեմատում սեփականի հետ: Այս գործունեությունը պահանջում է իրականացնել իմաստալից հաղորդակցում, դրսևորել խոսակցի հոգեկան աշխարհը թափանցելու կարողություն, որը թույլ կտա ցանկացած պատանու գծել իր հետ հաղորդակցվողի հետաքրքրությունների շրջանակը, գտնել նրան համատեղ գործունեության մղող դրդապատճառները: Իմաստալից հաղորդակցումը պատանհիներին հնարավորություն է տալիս, ընկալելով գեղարվեստական ստեղծագործության մեջ պարունակվող տեղեկությունները, մտածողության մեջ դրանք ենթարկել վերակառուցումների: Գեղարվեստական գրականության ընթերցումը անմիջական հաղորդակցումից տարբերվում է նրանով, որ տեղեկություն հաղորդողը՝ գրողը, ներկա չէ և չի մասնակցում տվյալ պահի հաղորդակցման գործընթացին, բայց ներկա է նրա գրավոր խոսքը: Ընթերցելով գեղարվեստական երկը, պատանին անպայմանորեն գտնվելու է հեղինակի մտածողության ազդեցության տակ, ընդօրինակելու է նրան: Միջնորդավորված այս հաղորդակցման ժամանակ պատանին իր գիտակցության մեջ վերաստեղծելու է գրական երկում ծավալված դեպքերը և իրադարձությունները, միջանձնային հարաբերությունները, հերոսների վարքն ու բարքը, բարոյական նորմերն ու չափանիշները: Թե ինչպես է տեղի ունենում այս վերաստեղծողական գործունեությունը, ինչպես են պատանհիները հաղթահարում միջնորդավորված հաղորդակցման դժվարությունները, այս մասին հոգեբանական գիտության մեջ դեռևս միասնական կարծիք չկա:

Մարդկային ստեղծագործությունը, անկախ բնագավառից, աշխարհը ճանաչելու գործընթաց է: Ստեղծագործության արդյունքը երևան է գալիս գրքերի, սիմֆոնիաների, նկարների, քանդակների ձևով: Ինչպես ցանկացած մարդ, այնպես էլ պատանին չի կարող ժխտել ստեղծագործության ներգործությունը: Գեղարվեստական գրականությունը պատանու մեջ զարգացնում է իմացական պրոցեսներ, այդ թվում նաև մտածողությունը: Գրական ստեղծագործությունը իր մեջ պարունակում է տեղեկություններ այն միջավայրի մասին, որի մեջ ապրել և ստեղծագործել են գրական հերոսները: Միջավայրն ունի իր սովորույթները, բարոյական չափանիշները, միջանձնային հարաբերությունների կազմավորման իր ձևերն ու պայմանները: Ստեղծագործության հեղինակը իրեն հատուկ լեզվական միջոցների օգտագործումով կերտում է գրական հերոսների կերպարներ, նրանց միջև միջանձնային և սոցիալական հարաբերություններ, հերոսների արտաքին տեսքը, ներքինը, ձգտելով ստեղծագործությանը հաղորդել այնպիսի բովանդակություն, որը հավատ ներշնչի ընթերցողներին:

Խմբի անդամ յուրաքանչյուր դպրոցական համատեղ քննարկման ժամանակ իրավունք ունեն արտահայտել իր կարծիքը գեղարվեստական ստեղծագործության մասին, զնահատել իրադրությունները, արժեքավորել գեղարվեստական հերոսի գործունեությունը, արարքները, վարքը, բարքը, բարոյական չափանիշները, ճիշտ կամ սխալ մոտեցումները, գործունեության մղող դրդապատճառները, հետաքրքրությունները, վերաբերմունքը այլ հերոսների նկատմամբ, հերոսների միջև կազմավորվող միջանձնային հարաբերությունները և այլն: Ամենակարևորն այն է, որ պատանհիները կարողանան բնութագրել հերոսին որպես անձնավորություն, ցույց տան նրա կամային որակները, բնավորության կայուն և անկայուն գծերը, նրա ընդունակությունները, հավակնությունների դրսևորումները և դրանք իրականության վերածելու հնարավորությունները և այլն: Նշված հարցերն իմաստավորելու համար փորձին մասնակցող յուրաքանչյուր պատանի պետք է վերլուծեր գեղարվեստական երկը: Դա նշանակում է,

որ գեղարվեստական երկը ընթերցելիս պատանին ձգտելու էր ըմբռնել երկի բովանդակությունը, դեպքերն ու իրադարձությունները, և այդ ամենը անցկացնել իր գիտակցության պրիզմայով: Նա լսելու է ընկերոջ կարծիքը նույն դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ՝ համաձայնվելով կամ չհամաձայնվելով դրա հետ: Փոխադարձաբար լրացնելով միմյանց տեսակետները և գալով ընդհանուր հայտարարի՝ նրանք արտահայտելու էին խմբի կարծիքը, որն էլ կլիներ խմբային մտածողության դրսևորում:

Գիտափորձից պարզվեց, որ տեղեկության ընտրության, վերամշակման և մեկնաբանման հարցերը շատ կարևոր են պատանիների մտածողության զարգացման համար: Տեղեկությունների ընտրությունը, դրանց համադրումը, համաձայնեցումը միմյանց հետ պատանու գիտակցության մեջ կատարվում է ինչպես ինտուիտիվ, այնպես էլ ստեղծագործական ճանապարհով: Նրա գիտակցության մեջ վերաստեղծվում են գրական ստեղծագործության բովանդակությունը, դեպքերն ու իրադարձությունները և այդ ամենը անցկացվում է գիտակցության պրիզմայով: Մի դեպքում գեղարվեստական երկի տեղեկությունը վերածվում էր սոսկ հաղորդակցման միջոցի, մի այլ դեպքում այն պատանու կողմից վերամշակվում էր և կերպարանափոխվում:

Կա տեղեկությունների ըմբռնման և վերամշակման երկու եղանակ: Առաջինի հիմքում ընկած է տեղեկությունների անորոշությունը, երկրորդի հիմքում ընկած են տեղեկությունների տարատեսակությունները, որոնք անմիջապես վերամշակվում են պատանիների կողմից: Գրական երկի մեջ պարունակվող զանազան տեղեկությունները ամրակայվում են պատանիների հետաքրքրությունների մեջ: Առաջին հերթին նրանց կողմից ընկալվում և առանձնացվում են հերոսների հոգեբանական որակները: Պատանին դրանք համեմատում էր իր շրջապատի մարդկանց հոգեկան որակների հետ և ընդհանրացնում: Պատանիները ակտիվ էին, երբ կարողանում էին վեր հանել և արժևորել հերոսների միջև եղած միջանձնային հարաբերությունները, գլխավոր և մյուս հերոսների մտածողությունների առանձնահատկությունները: Այդ վերլուծություններում, աչքի առաջ ունենալով անցյալը, նրանք հենվում են այսօրվա իրականության վրա: Հարաբերակցության մեջ դնելով անցյալը և ներկան, նրանք նաև ինքնատիպ մտածողության, օբյեկտիվ վերլուծության միջոցով կարողացան տալ Լևոնի և մոր մտածողության բնութագրերը: Գրական այս երկու հերոսների մտածողությունները ունեն հակադիր ընթացքներ, թեև դրանց հիմքում ընկած են միևնույն միջանձնային հարաբերությունները: Լևոնի համար կա երկու ձգտում. փող ունենալը և ձայնը կատարելագործելու համար Իտալիա գնալը և երկրորդ՝ իր սիրած էակին հանդիպելը: Մակայն նրա մտածողությունը քննադատորեն չի ընկալում իրականությունը: Պատանիների կողմից երկու գրական հերոսների մտածողությունների ինքնատիպ մարմնավորումը ցույց է տալիս, որ հերոսների հոգեբանական որակները բնութագրելիս և արժեքավորելիս նրանք հենվել են օբյեկտիվ դատողությունների վրա և կյանքի միևնույն պայմանները արժեքավորել են տարբեր դիրքերից: Հիմք ընդունելով հերոսների գործունեության տարբեր դրոշմատեսակները, հակադրել են դրանք, ցույց են տվել, որ միևնույն սոցիալական միջավայրում, նույն պայմաններում ապրող անձերի մեջ առաջ են գալիս մտածողության տարբեր ընթացքներ: Հերոսների ապրելակերպը, հոգեկան որակները, գործելակերպը պատանիների գիտակցության մեջ արտացոլվել են որպես մարդուն իմաստավորելու, արժեքավորելու և յուրովի գնահատելու չափանիշներ: Նրանք հերոսներին բնութագրել են ոչ թե ելնելով շրջապատի նկատմամբ նրանց ունեցած հարաբերություններից, այլ այդ հարաբերությունների և կյանքի միևնույն պայմանների նկատմամբ նրանց մեջ ծնված տարբեր ձգտումներից: Լևոնը մեխանիկորեն առաջությունը տալիս է միայն մեկ դրոշմատեսակի: Նա չի քննարկում իր միակողմանի գործունեությունը: Այս փաստը շատ լավ էին նկատել խմբի անդամ երեք պատանիներ: Նրանք ճիշտ էին ընդգծում, որ առաջադրված հավակնությանը հասնելու համար պետք է պայքարել, եթե սկզբից այն հնարավոր չէ, ապա կարելի է իրականացնել միջնորդավորված՝ փոքր հավակնությունների լուծմամբ ձգտել ավելի մեծին: Լևոնը երբեք չի փոխում իր գործելաոճը, միշտ գործում է միակերպ, միանշանակ, այդ պատճառով էլ դժբախտության մեջ ընկնելիս գործում է նույն ստերեոտիպով: Միակ փոփոխությունը բացասական է՝ նա հարբեցող է դառնում: Փորձի մասնակիցները Լևոնին հակադրում են մորը՝ իր մայրական սիրով, ներողամտությամբ, որդուն կորցնելու մշտական

վախով: Մայրը մեծ վիշտ է տեսել. ամուսինը հարբեցող է դարձել անպտուղ սիրո պատճառով: Այդպիսի անպտուղ մի սեր էլ բուն է դրել որդու մեջ, և նա ցանկանում է որդուն ետ պահել թատրոնից, որը դարձել էր իրենց ընտանիքի ողբերգության պատճառը:

Համատեղ գործունեության մեջ կազմավորվող մտածողության արդյունավետությունը, ինչպես ցույց է տալիս փորձը, ավելի բարձր է, քան մեկուսացված, անհատական մտածողությունը: Պարզվեց նաև, որ խմբային գործունեությունը հաղորդակցման պայմաններում նպաստում է խմբի անդամների ոչ միայն համատեղ, այլ անհատական մտածողության զարգացմանը: Դա երևում էր նրանից, որ գիտափորձերի ժամանակ փորձարկվողները, հենվելով իրենց ընկերոջ մտածողության վրա, աշխատում էին զարգացնել իրենց դատողությունները տարբեր ուղղություններով: Խմբի ներսում եղած հաղորդակցական գործունեությունը հնարավոր է դարձնում խորացնել խմբի անդամ յուրաքանչյուր դպրոցականի հետաքրքրությունը, մտքերն ու դատողությունները: դպրոցականների կողմից գրական ստեղծագործությունը վերլուծելիս:

Որպես իրականության ճանաչման չափանիշներից մեկը, որպես հաղորդակցման կարևոր ձև, որի միջոցով լուծվում են վիճելի հարցեր, պատանհիների կողմից գեղարվեստական ստեղծագործության համատեղ քննարկման ժամանակ կարևորվում է նաև բանավեճը, որի մեջ ոչ միայն շարադրվում, այլև բախվում են տարբեր տեսակետներ՝ ապահովելով խմբային մտածողության զարգացումը:

Համատեղ խմբային գործունեության մեջ ինչպես անհատական, այնպես էլ խմբային մտածողության զարգացման տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև փորձարկվողի անձնավորությունը: Պատանհիները երբեմն օգտագործում էին պրոնեկցիոն մեթոդը գրական հերոսներին բնութագրելու համար: Լավ ճանաչելով իրենք իրենց, դպրոցականներն իրենց հատկությունները հաճախ վերագրում էին գրական հերոսներին: Համատեղ քննարկման ժամանակ նկատելի դարձավ մի հանգամանք ևս. պատանհիները խմբային հաղորդակցման ժամանակ երբեմն ձգտում էին ինքնակամ փոփոխության ենթարկել վիպակում ծավալվող դեպքերը, իրադարձությունները կամ դրանց հաղորդել այլ ընթացք: Սա խոսում է այն մասին, որ պատանհիներին խորք չեն ստեղծագործելու ունակություններն ու երևակայությունը:

Գնահատելով բանավեճի ընթացքում պատանհիների յուրաքանչյուր միտք և արտահայտություն, դրանց մեջ մի կողմից առանձնացնում ենք գեղարվեստական երկը ընթերցելիս պատանու գիտակցության մեջ ձևավորված պատկերացումը գրական հերոսի հոգեբանական էության մասին, մյուս կողմից՝ նրա ակտիվ վերաբերմունքը գեղարվեստական երկի բովանդակության նկատմամբ: Գեղարվեստական երկում հեղինակը նաև դրսևորում է իր ակտիվ վերաբերմունքը՝ հաստատելով, տարակուսելով, ցանկանալով, ցավակցելով և այլն: Այս ամենը պատանու գիտակցության մեջ բախվում է նրա սուբյեկտիվ կարծիքի հետ: Հոգեբանական այս գործընթացի մեջ առաջ են գալիս պատանու գիտելիքների սուբյեկտիվ և օբյեկտիվ փոխհարաբերություններ:

Գեղարվեստական երկի վերլուծությունը դպրոցականների համար նաև ինքնաճանաչման միջոց է: Խմբի մեջ ընդգրկված ցանկացած պատանի հաղորդակցման մեջ մտնելով խմբի մյուս անդամի հետ՝ նրանց կատարած վերլուծությունը, մտքերն ու դատողությունները, հերոսների գործողությունների բնութագրումը, նրանց բնավորության գծերի արժեքավորումը և այլ հոգեբանական երևույթներ համեմատության մեջ է դնում իր մեջ առաջացածների հետ: Այդպես պատանին ճանաչում է ինքն իրեն, գնահատում իր գործունեությունը: Այս ամենը կատարվում է համեմատության և ինքնավերլուծության միջոցով: Ինքնավերլուծությունը չի կարելի որակել որպես ինքնանպատակ ինքնաքննադատում: Ընդհակառակը, ինքնավերլուծությունը առաջ է գալիս, որպես չափանիշ, որպես մտածողությունն արժեքավորելու միջոց: Այս դեպքում պատանիները կարողանում են գնահատել ոչ միայն իրենց, այլև խմբի մեկ ուրիշ անդամի մտածողությունն ու ներդրումը գեղարվեստական երկի վերլուծության գործընթացում: Ինքնավերլուծությունը համարվում է ինքնաճանաչման ուղիներից մեկը: Ինքնաճանաչումը ընկալվում և գնահատվում է խմբի անդամ մյուս պատանիների կողմից:

Գեղարվեստական ստեղծագործության համատեղ խմբային քննարկումը հնարավորություն է տալիս ճանաչել իրեն և ըստ այդմ՝ մտնել խմբի մյուս անդամների հետ

հաղորդակցման մեջ, իր համար բացել և ընկալելի դարձնել խմբի մյուս անդամների իմացական պրոցեսների առանձնահատկությունները և մտածողության որակները: Խմբային աշխատանքը, ներգործելով ամհատի մեկուսացված մտածողության վրա, նոր աստիճանի է բարձրացնում դրա արդյունավետությունը: Բարձր առաջադիմություն ունեցող պատանու հետ հաղորդակցումը, նրա մտածողությունը չափանմուշ է ծառայում թույլի համար: Համատեղ հաղորդակցման շնորհիվ նա դուրս է գալիս պասիվ վիճակից, իրեն ազատ է զգում, մասնակցություն է բերում գեղարվեստական ստեղծագործության վերլուծության համատեղ գործընթացին: Ամփոփելով գիտափորձերի արդյունքները, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Գրական երկում պարունակվող տեղեկությունների ընտրությունը, վերամշակումը և դրանց մեկնաբանությունը կարևոր են պատանիների մտածողության զարգացման գործում: Վերակողմնորելով, վերափոխելով գրական երկից քաղած տեղեկությունները՝ խմբում ընդգրկված պատանիները դրանք մտցնում էին իրենց ունեցած գիտելիքների, սովորույթների, բարոյական նորմերի, ձգտումների ու հետաքրքրությունների շրջանակների մեջ: Տեղեկությունների ընտրության ու վերամշակման գործընթացի հիմքում ընկած են ինչպես ինտուիտիվ, այնպես էլ տրամաբանական դատողությունները, որոնք միջոց են ստեղծագործական մտածողության զարգացման համար:

2. Համեմատության մեջ դնելով տարբեր հերոսների մտածողության ընթացքները՝ դպրոցականները կարողանում էին դրանք նաև արժեքավորել: Օրյելտիվորեն գնահատելով մտածողության բարձր մակարդակ ունեցող հերոսին, արդարացնում էին նրա գործունեությունը: Համեմատությունը նրանց հնարավորություն է տալիս գնահատել նաև հերոսների իմացական գործընթացների արդյունավետությունը:

3. Արժեքավորելով գրական հերոսներին՝ կարողանում էին հիմնականում ճիշտ բացահայտել նրանց գործունեության դրդապատճառները, ունեցած դիրքորոշումները, նպատակին հասնելու կամային ջանքերը, բացահայտել գործունեության մղող տարբեր պատճառահետևանքային կապերը, թաքնված հարաբերությունները:

4. Համատեղ խմբային գործունեությունը զարգացնում է խմբի անդամ յուրաքանչյուր պատանու մտածողությունը ավելի բարձր արդյունավետությամբ, ինչը հնարավոր չէ դպրոցականի մեկուսի աշխատանքի պայմաններում: Խմբում տեղի ունեցող քննարկումների շնորհիվ դպրոցականները սովորում էին միմյանցից, ավելի հեշտ յուրացնում ընկերոջ փորձը, գիտելիքը, հիմնավորված դատողությունը:

5. Համատեղ գործունեության մեջ ձևավորվում է պատանիների բանավիճային մտածողությունը, զարգանում նրանց խոսքը:

## ОСОБЕННОСТИ ЮНОШЕСКОГО МЫШЛЕНИЯ ПРИ СОВМЕСТНОМ ОБСУЖДЕНИИ ЛИТЕРАТУРНОГО ПРОИЗВЕДЕНИЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Саакян \_\_\_

Показывается, что групповая деятельность повышает активность и продуктивность мышления каждого школьника-участника группы. При этом, развитие мышления слабого школьника компенсируется за счет другого-с высокими интеллектуальными способностями.

Совместное обсуждение литературного произведения в дискуссионных условиях дает возможность юношам выразить собственное мнение, дополнить мысли товарища, скорректировать неверные суждения, развивать свою речь и т.д.